Արձանագրություն N5
<<ՋԿ-ԳՀԾՁԲ-20/1>> ծածկագրով գնանշման հարցման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 նոյեմբերի 2019թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարգարյանը (ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ Է. Մխիթարյանը (ԳԱ), Ռ. Գաբրիելյանը (ԳԱ), և Գ. Հունանյանը (ԲԱ):

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. <<ՋԿ-ԳՀԾՁԲ-20/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ

Օրակարգ՝

1. **ՋԿ-ԳՀԾՁԲ-20/1** ծածկագրով ընթացակարգի մասնակից՝ «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով (Հավելվածներ 3 և 3.2) նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների քննարկում:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ առաջին տեղ զբաղեցրած «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ եզրակացության ուսումնասիրության արդյունքների քննարկում:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Ա. Մարգարյանը և նշեց, որ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրվել են հրավերով պահանջվող որակավորման չափանիշների վերաբերյալ 1-ին տեղ զբաղեցրած ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը: Նշվեց, որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված չեն և Հավելված 3.2-ի <<գործունեության ոլորտը և կատարված աշխատանքը>> բաժինը լրացված է թերի: 27.11.2019թ. քննարկման արդյունքում որոշվեց առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2. Գնահատման արդյունքների հաստատման վերաբերյալ

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցումը ներկայացվել է 14.11.2019 թվականին:

18.11.2019 թվականին ստացվել է համապատասխան եզրակացությունը:

2. 27.11.2019թ.-ին արձանագրված անհամապատասխանությունները Ընկերության կողմից շտկվել են:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով ստացված եզրակացությունը, մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը և ամփոփելով գնահատման թերթիկները՝ «**ներքին աուդիտի ծառայությունների**» ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՋԿ-ԳՀԾՁԲ-20/1** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց,
2. **ՋԿ-ԳՀԾՁԲ-20/1** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին,
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,
4. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,
5. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել նշված չափաբաժիններում ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ		Ա. Մարգարյան
անդամներ		Է. Մխիթարյան
		Ռ. Գաբրիելյան
		Գ. Հունանյան
Քարտուղար		Ա. Սարգսյան